

Հարգելի ընթերցող, հողվածի հեղինակը կամայական վերլուծության է ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 09.11.2007թ. նիստում հաստատված Հայաստանի Հանրապետության Նախագահի փետրվարի 19-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի որոշ կետեր՝ թյուրիմացության մեջ գցելով ընթերցողին:

Ըստ նրա՝ «... ցանկության դեպքում, ԿԸՀ-ն կարող էր ... թեկնածուների գրանցման ավելի վաղ ժամկետ սահմաններ ...: Այս դեպքում մեխանիկորեն կավելանար նաև նախընտրական քարոզարշավի ժամկետը: Բայց ... ԿԸՀ-ն նման շռայլություն իրեն չի կարող թույլ տալ:»:

Ընթերցողին տեղեկացնեմ, որ ինչպես ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական մյուս միջոցառումների, այնպես էլ Հանրապետության Նախագահի թեկնածուների առաջադրման փաստաթղթերի ներկայացման, թեկնածուների գրանցման և նախընտրական քարոզչության իրականացման ժամկետները սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով, և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու չէ սահմանել այլ ժամկետներ:

Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաստատած ժամանակացույցի՝ Հանրապետության Նախագահի թեկնածուների առաջադրման փաստաթղթերը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվելու են ս/թ նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 6-ը՝ ժամը 18:00-ն, թեկնածուների գրանցումը կատարվելու է 2007թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2008թ. հունվարի 20-ը, իսկ նախընտրական քրոզչությունն իրականացվելու է 2008թ. հունվարի 21-ից փետրվարի 17-ը ներառյալ:

Հարգելի ընթերցող, Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցին կարող եք ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ս/թ նոյեմբերի 10-ի համարից, ինչպես նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ուսկայքից ([www.elections.am](http://www.elections.am)):

*S. Ohanjyan*